ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 30 նոյեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Ինգա Դանիելյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Ինգա Դանիելյանը 2015թ. նոյեմբերի 9-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-51-Ն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներին չհամապատասխանող և անվավեր»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը հակասում է Սահմանադրության նորմերի պահանջներին, քանի որ չարդարացված կերպով սահմանափակում է գործը դատարանում ըստ էության քննության առարկա դարձնելու իրավունքը:

2. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետևանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են:

Փաստորեն, դիմողը վերոհիշյալ դրույթների սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո իրականում բարձրացնում է դրանց **կիրառման իրավաչափության հարց:** Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Ինգա Դանիելյանի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

30 նոյեմբերի 2015 թվականի

ՍԴԴԿՈ/1-26